ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ և ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
(2024-25 և 2025-26 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ)

10. 04. 2026թ.

Ելնելով Մասնաճյուղի ռազմավարական նպատակներից՝ Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժինն իրականացրել է 2025-26 ուստարվա 1-ին կիսամյակում մասնաճյուղի 4 ֆակուլտետների 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների՝ հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից բավարարվախության հարցումների վերլուծություն: Միաժամանակ կատարվել է համեմատություն 2024-25 ուստարվա նույն ժամանակամիջոցի վերաբերյալ կատարված վերլուծության տվյալների հետ:

Հարցման նպատակն է՝ բացահայտել հետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում ուսանողների մոտ իհայտ եկած խնդիրները, հավաքագրել առաջարկներ հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման բարելավման ուղղությամբ, գրանցել նախորդ ուստարվա հետ համեմատության դինամիկան, ակտիվացնել ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին և խթանել ուսանող – բուհ համագործակցությունը:

Հարցաշարը ներառել է հարցեր, որոնց միջոցով նպատակ ենք ունեցել պարզելու ուսանողների բավարարվածությունը.

1. հետազոտական աշխատանքների բովանդակությունից և ռեսուրսներից,
2. կատարած աշխատանքից,
3. հետազոտական աշխատանքների կազմակերպումից,
4. հետազոտական աշխատանքների գնահատումից:

Հարցման օբյեկտիվության և ուսանողների անկաշկանդ մասնակցության նկատառումներով հարցումն իրականացվել է անանուն և առցանց եղանակով: Հարցման իրականացման և ուսանողների ակտիվ մասնակցության ապահովման համար բաժինը համագործակցել է գրասենյակների և ուսանողական կառույցների ներկայացուցիչների հետ: Հարցմանը մասնակցել են հետազոտական աշխատանք իրականացրած **248** ուսանողներից **176-ը (71%):**

Հարցման արդյունքները հավաքագրվել և վերլուծվել են Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնի կողմից:

Այժմ ներկայացնենք առանձին գործընթացների վերաբերյալ հարցման ամփոփ արդյունքները և դրանց վերլուծությունը:

Գնահատման 5 միավորանոց համակարգում՝ հետազոտական աշխատանքի իրականացումից ուսանողների բավարարվածությունը ֆակուլտետներում տատանվել է **4.3 – 4.6 (նախորդ ուստարի՝ 4.4-4.8),** ընդհանուր մասնաճյուղում բավարավածության միջին գնահատականը կազմել է **4.5 (նախորդ ուստարի՝ 4.6):** Արդյունքը գոհացնող է և փաստում է մասնաճյուղի հետևողական և բարձր մակարդակի գործունեությունը:

Հետազոտական աշխատանքների իրականացման նպատակներն են ուսանողների մոտ զարգացնել մասնագիտական անհրաժեշտ հմտություններ՝ գործնական կիրառության, թիմային

համագործակցության, տվյալների հետ աշխատելու, վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսակետից:

Հարցումների արդյունքների հիման վրա կարելի է պարզել, թե հետազոտական աշխատանքների ինչպիսի ազդեցություններ են տեսել ուսանողներն իրենց վրա:

Ցուցանիշ	Տոկոս (%)	Վերլուծություն
Նոր գիտելիքներ	**22%**	Հետազոտական աշխատանքները էականորեն նպաստել են ուսանողների տեսական գիտելիքների ընդլայնմանը՝ ապահովելով ակադեմիական հիմքի ձևավորումը:
Գործնական կարողություններ	**23%**	Աշխատանքները առավելապես զարգացրել են ուսանողների կիրառական հմտությունները և նպաստել գործնական փորձի ձեռքբերմանը:
Մասնագիտական հմտություններ	**15%**	Հետազոտական աշխատանքների պատրաստման գործընթացը նպաստել է կոնկրետ մասնագիտական գործիքների և մեթոդների տիրապետմանը՝ ուսանողների մոտ ձևավորելով համապատասխան հմտություններ, սակայն դրանց հետագա զարգացումը պահանջում է առավել նպատակային մոտեցում::
Վերլուծելու կարողություններ	**18%**	Ուսանողների մոտ ձևավորվել են վերլուծական կարողություններ, սակայն դրանց համակարգման անհրաժեշտություն կա:
Դատողություններ և եզրակացություններ կատարելու ունակություններ	**11%**	ՈՒսանողները որոշ չափով դժվարացել են հիմնավորված եզրակացություններ ձևակերպել, ինչը կարող է պայմանավորված լինել մեթոդաբանական գիտելիքների պակասով և վկայում է քննադատական մտածողության ու եզրակացություններ ձևակերպելու հմտությունների հետագա զարգացման անհրաժեշտությունը:
Ինքնուրույն աշխատելու ունակություններ	**11%**	Ուսանողները ձեռք են բերել որոշակի ինքնուրույնության փորձ, սակայն անհրաժեշտ է այն առավել զարգացնել և ամրապնդել:

Արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ հետազոտական աշխատանքների իրականացման արդյունքում առավել մեծ առաջընթաց է գրանցվել գործնական կարողությունների **(23%)** և նոր գիտելիքների ձեռքբերման **(22%)** ոլորտներում, ինչը վկայում է ուսանողների կիրառական և տեսական պատրաստվածության զարգացման մասին: Համեմատաբար բարձր արդյունք է արձանագրվել նաև վերլուծելու կարողությունների **(18%)** և մասնագիտական հմտությունների **(15%)** ձևավորման ուղղությամբ, թեև այս ոլորտներում դեռևս նկատվում է զարգացման անհրաժեշտություն: Առավել ցածր ցուցանիշներ գրանցվել են դատողություններ և եզրակացություններ կատարելու **(11%),** ինչպես նաև ինքնուրույն աշխատելու ունակությունների **(11%)** ձևավորման ոլորտներում, ինչը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է առավել նպատակային աշխատանք իրականացնել քննադատական

մտածողության, հիմնավորված եզրակացությունների ձևակերպման և ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացման ուղղությամբ:

Առաջարկներ.

Ամփոփելով արդյունքները՝ կարելի է նշել, որ ուսանողների քննադատական մտածողության, եզրակացությունների ձևակերպման և մասնագիտական հմտությունների հետագա զարգացման համար նպատակահարմար է ուժեղացնել մեթոդական աջակցությունը, կազմակերպել վերլուծական և հետազոտական հմտությունների զարգացմանը միտված սեմինարներ, ինչպես նաև խթանել ուսանողների ինքնուրույն աշխատանքը՝ տրամադրելով հստակ ուղեցույցներ և համապատասխան նյութեր:

Առանցքային հարցերի վերլուծություն

1.Հարց. «Իրականացման տեսանկյունից Ձեզ համար ի՞նչ չափով էր բարդ հանձնարարված հետազոտական աշխատանքը»

- **76%** – «Ընթացքում շատ նոր բաներ սովորեցի»
- **24%** – «Հեշտությամբ կատարեցի աշխատանքը»
- **0%** – «Այդպես էլ մինչև վերջ չկարողացա հաղթահարել»

1. «Ընթացքում շատ նոր բաներ սովորեցի» – 76%

Սա վկայում է, որ հետազոտական աշխատանքները հիմնականում ունեցել են ուսուցողական նշանակություն՝ նպաստելով նոր գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը, իսկ առաջադրանքները եղել են ուսումնական առումով արդյունավետ և նպաստել են բովանդակային գիտելիքների հարստացմանը:

2. «Հեշտությամբ կատարեցի աշխատանքը» – 24%

Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ ուսանողները հետազոտական աշխատանք կատարելիս չեն հանդիպել բարդությունների, հավանաբար՝ արդեն ունեցել են որոշակի փորձ կամ ինքնուրույնություն: Սակայն այստեղ կարելի է ենթադրել նաև, որ որոշ ուսանողների համար առաջադրանքը եղել է չափազանց հեշտ:

3. «Այդպես էլ մինչև վերջ չկարողացա հաղթահարել» – 0%

Այստեղ ունենք դրական ցուցանիշ. այն վկայում է, որ հետազոտական աշխատանքը ուսանողների համար հասանելի է եղել, չնայած իր բարդությանը, կարելի է եզրակացնել, որ այստեղ ապահովվել է դասախոսների ուղեկցող դերակատարությունը:

2.Հարց. «Ծանո՞թ եք եղել գնահատման չափանիշներին».

- **97%** – «Այո»
- **3%** – «Ոչ»

Ըստ տվյալների՝ ուսանողների ճնշող մեծամասնությունը (97%) նախապես ծանոթ է եղել գնահատման չափանիշներին, ինչը կարևոր պայման է արդար և թափանցիկ գնահատման ապահովման համար, 3%-ը պատասխանել են «Ոչ», ինչը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում

գնահատման չափանիշների մասին տեղեկությունն ամբողջությամբ չի փոխանցվել կամ ուսանողները լիարժեք չեն ընկալել:

Ընդհանուր առմամբ գնահատման չափանիշների վերաբերյալ իրազեկվածությունը գտնվում է շատ բարձր մակարդակի վրա, սակայն անհրաժեշտ է ապահովել ուսանողների լիարժեք իրազեկվածությունը:

3.Հարց. Բավարարվա՞ծ եք արդյոք հետազոտական աշխատանքի համար ձեր ստացած գնահատականից.

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս ուսանողների բարձր բավարարվածություն գնահատման արդյունքներից.

- **94.5%** –գնահատականը համապատասխանում է իրենց կատարած աշխատանքին,
- **1.8%** – գնահատականը նույնիսկ բարձր է իրենց սպասումներից,
- **3.7%** –գնահատականը չի համապատասխանում իրենց կատարած աշխատանքին:

Հարցման արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ուսանողների մեծամասնությունը՝ **94.5%-ը** իրենց ստացած գնահատականը համարել են օբյեկտիվ և համարժեք, այսինքն գնահատման համակարգը ուսանողների համար հասկանալի ու ընդունելի է, և նրանք իրենց ստացած գնահատականը համարժեք են համարում իրենց կատարած աշխատանքին: ՈՒսանողների **1.8%-ը** թեև գոհ են ստացած գնահատականից, այնուամենայնիվ՝ սպասում էին ավելի ցածր արդյունքի, **3.7%** ցուցանիշը ցույց է տալիս որ առանձին դեպքերում ուսանողները չեն ընկալում գնահատումը որպես լիովին արդար կամ համարժեք: Սա կարող է պայմանավորված լինել գնահատման չափանիշների ընկալման տարբերություններով կամ գնահատման գործընթացում որոշակի անհստակություններով:

Ուսանողները գնահատել են իրենց կատարած աշխատանքը՝ հետևյալ չափանիշներով.

- **Աշխատանքի նպատակի և խնդիրների ձևակերպում – 62%** (նախորդ ուստարի՝ **62%**)
  Այս ցուցանիշը նախորդ ուստարվա համեմատ մնացել է կայուն, ինչը վկայում է, որ ուսանողները նույն կերպ են գնահատում իրենց կարողությունը՝ նպատակներն ու խնդիրները հստակ ձևակերպելու հարցում:
- **Թեմայի արդիականության գնահատում – 63%** (նախորդ ուստարի՝ **70%**)
  Այս ուստարվա համեմատաբար փոքր ցուցանիշը համեմատած նախորդ ուստարվա հետ վկայում է, որ ուսանողները իրենց աշխատանքներում ավելի հաճախ չեն տեսնում թեմաների արդիականության բարձր մակարդակ կամ զգացվում է ընտրված թեմաների կապի նվազում ժամանակակից պահանջների հետ:
- **Տեղեկատվության հավաքագրում – 69%** (նախորդ ուստարի՝ **70%**)
  Այս ցուցանիշը փաստում է, որ ուսանողները հիմնականում հաջողությամբ են կատարել տվյալների հավաքագրման գործընթացը, և առաջընթացը համեմատաբար կայուն է, սակայն դեռ կան խնդիրներ՝ աղբյուրների ընտրության, հասանելիության և վերլուծության առումով (այս չափանիշի հետ կապված բաց հարցերում ուսանողները նշել էին, որ նյութերի անհասանելիության հետ կապված ունեն խնդիր):
- **Արդյունքների ներկայացում – 73%** (նախորդ ուստարի՝ **76%**)

Չնայած նախորդ ուստարվա համեմատ մի փոքր անկման (-3%), ուսանողները հիմնականում կարողացել են ճիշտ և կառուցվածքային ձևով ներկայացնել իրենց հետազոտության վերջնական տվյալները և արդյունքները: Սա վկայում է խմբագրական կամ մեթոդաբանական աջակցություն ստանալու մասին:

- **Եզրակացության ձևակերպում – 70%** (նախորդ ուստարի՝ **72%**)
  Այս ցուցանիշը դեռևս բարձր մակարդակի վրա է և վկայում է, որ ուսանողները հիմնականում հաջողությամբ են ձևակերպում եզրակացությունները:

Եզրակացություն.

Ելնելով հարցման արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ուսանողների հիմնական հմտությունների ցուցանիշները 2025–2026 ուստարում պահպանվել են բարձր մակարդակի վրա, բայց համեմատած 2024–2025 ուստարվա հետ բոլոր ոլորտներում նկատվում է մի փոքր անկում: Ամենաբարձր արդյունքները գրանցվել են եզրակացության ձևակերպման, արդյունքների ներկայացման և տեղեկատվության հավաքագրման գնահատման ոլորտներում:

ՈՒշադրություն պետք է դարձնել հատկապես նպատակների և խնդիրների ձևակերպման ոլորտին, որը շարունակում է մնալ համեմատաբար ցածր: ՈՒստի առաջիկա ուստարիներում խնդիրները շտկելու և աշխատանքի որակը բարելավելու համար անհրաժեշտ է ավելացնել մեթոդական աջակցությունը և տրամադրել առավել հստակ ուղեցույցներ:

4.Հարց.Գնահատեք դասախոսի աջակցությունը

Ուսանողները գնահատել են դասախոսի աջակցությունը տարբեր փուլերում.

- **Թեմայի ընտրություն – 72%** (նախորդ ուստարի՝ **80%**)
  Նախորդ ուստարվա համեմատ այս ցուցանիշը նվազել է (-8%), ուսանողները դասախոսի աջակցությունը թեմայի ընտրության գործում գնահատել են մի փոքր ցածր: Այնուամենայնիվ ցուցանիշը բավականին բարձր է և վկայում է այն մասին, որ դասախոսները իրենց աջակցությունն են ցուցաբերել ուսանողներին՝ թեմաների ընտրության հարցում:
- **Հետազոտական մեթոդների ընտրություն – 66%** (նախորդ ուստարի՝ **75%**)
  Դասախոսների կողմից հետազոտական մեթոդների ընտրության աջակցությունը ուսանողները գնահատել են ցածր (-9%), սա վկայում է, որ որոշ ուսանողների համար մեթոդների ընտրության գործընթացը եղել է բարդ կամ ուղեցույցները հստակ չեն եղել, ինչի պատճառով գնահատականը փոքր-ինչ իջել է:
- **Վերլուծությունների իրականացում – 64%** (նախորդ ուստարի՝ **73%**)
  Այս ուստարվա ցուցանիշը նախորդ ուստարվա համեմատ նվազել է 9%-ով, որը փաստում է ուսանողների վերլուծությունների ընթացքում դասախոսների աջակցության պակաս:
- **Գրականության և մեթոդական նյութերի ընտրություն – 67%** (նախորդ ուստարի՝ **73%**)
  Ուսանողները հիմնականում գոհ են տրամադրված նյութերից և գրականության հղումներից, սակայն որոշ ուսանողների համար տեղեկությունները բավարար և հասանելի չեն եղել:
- **Աշխատանքի արդյունքների ձևակերպում – 64%** (նախորդ ուստարի՝ **75%**)

Աշխատանքի արդյունքների ձևակերպման ոլորտում այս ուստարվա ցուցանիշը նախորդ ուստարվա համեմատ նվազել է 11%-ով, ինչը վկայում է տվյալ փուլում դասախոսների կողմից մեթոդական աջակցության պակասի մասին: Հետևաբար անհրաժեշտ է այս ուղղությամբ ապահովել առավել համակարգված և հստակ աջակցություն:

Եզրակացություն.

Դասախոսի աջակցության գնահատման հինգ փուլերի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2025–2026 ուստարում բոլոր փուլերում նկատվում է որոշակի նվազում նախորդ ուստարվա համեմատ: Չնայած այս հանգամանքին՝ ցուցանիշները շարունակում են պահպանվել միջինից բարձր մակարդակի վրա, ինչը վկայում է, որ դասախոսների կողմից ուսանողներին տրամադրվող աջակցությունը ընդհանուր առմամբ բավարար է:

Առավել բարձր գնահատականը պահպանվել է թեմայի ընտրության և գրականության ու մեթոդական նյութերի տրամադրման ոլորտներում, ինչը փաստում է, որ ուսանողները աշխատանքի սկզբնական փուլերում ստանում են անհրաժեշտ ուղղորդում: Միևնույն ժամանակ առավել ցածր ցուցանիշներ արձանագրվել են հետազոտական մեթոդների ընտրության, վերլուծությունների իրականացման և հատկապես աշխատանքի արդյունքների ձևակերպման փուլերում, ինչը վկայում է դասախոսների կողմից մեթոդական աջակցության պակասի մասին:

Ընդհանուր առմամբ, արդյունքները ցույց են տալիս, որ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել հետազոտական աշխատանքի միջին և եզրափակիչ փուլերին՝ ապահովելով ավելի հստակ, համակարգված և հասանելի մեթոդական աջակցություն, ինչը կնպաստի ուսանողների աշխատանքների որակի հետագա բարելավմանը:

Բաց հարցեր.

1. Հարց. Արդյո՞ք ձեր հետազոտության արդյունքները կարող են կիրառվել, որտե՞ղ և դրա համար ի՞նչ է անհրաժեշտ:

Ուսանողների **86.9%**-ը նշել է, որ հետազոտության արդյունքները կարող են հետագայում կիրառվել: Հետազոտության արդյունքների կիրառման հնարավորությունները բավականին բազմազան են և ընդգրկում են տարբեր ոլորտներ՝ պայմանավորված մասնագիտական առանձնահատկություններով:

Ըստ ուսանողների հետազոտությունները կիրառելի են հատկապես հետևյալ ոլորտներում.

- ✓ **Մասնագիտական ոլորտում** – կազմակերպություններում, բանկային համակարգում, վիճակագրական և վերլուծական աշխատանքներում:
- ✓ **Կրթական միջավայրում** – համալսարաններում և դպրոցներում որպես ուսումնական նյութ, դասընթացների (մասնավորապես՝ արվեստի պատմություն և այլ մասնագիտական առարկաներ) շրջանակում:
- ✓ **Մշակութային ոլորտում** – արվեստի և պատմամշակութային ուսումնասիրությունների, մշակութային ծրագրերի և նախագծերի իրականացման մեջ:
- ✓ **Զբոսաշրջային ոլորտ** – տուրերի կազմակերպման և զբոսաշրջային գործունեության ընթացքում:

- ✓ **Գիտական ոլորտում** – դիպլոմային աշխատանքներում, հետազոտություններում, գիտական նյութերի մշակման և ներկայացման մեջ:
- ✓ **Հումանիտար ոլորտում** – լեզվաբանության, բանասիրության և թարգմանչական գործունեության շրջանակներում:
- ✓ **Անձնական և մասնագիտական զարգացման մեջ** – գիտելիքների խորացման, քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների զարգացման նպատակով:

Այսպիսով, հետազոտության արդյունքները կիրառելի են ինչպես գործնական, այնպես էլ կրթական, գիտական, հումանիտար տարբեր ոլորտներում՝ նպաստելով մասնագիտական կարողությունների զարգացմանը:

Հետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած՝ երկու ուստարիներում կրկնվող խնդիրները և առաջարկները բացահայտելու նպատակով իրականացվել է 2024–2025 և 2025–2026 ուստարների 3-րդ (3-րդ կուրսերը՝ 3-րդների հետ) և 4-րդ կուրսերի (4-րդ կուրսերը 4-րդների հետ) ուսանողների կողմից ներկայացված խնդիրների և առաջարկների ինչպես նաև 3-րդ և 4-րդ կուրսերի խնդիրների և առաջարկների համեմատական վերլուծությունները, որի նպատակն է գնահատել դրանց փոփոխության միտումները, բացահայտել կրկնվող դժվարությունները և պարզել, թե հետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած որ խնդիրներն են պահպանվել երկու ուստարիներում և շարունակում են մնալ չլուծված, ինչպես նաև գնահատել իրականացված բարելավումների արդյունավետությունը:

2. Հարց. Ի՞նչ խնդիրների եք հանդիպել հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում (3-րդ կուրսեր, 2025-26ուստարի):

Ամփոփելով արդյունքները կարելի է դիտարկել, որ ուսանողների մեծ մասը հետազոտական աշխատանքի ընթացքում լուրջ խնդիրների չի հանդիպել, սակայն մի շարք դեպքերում արձանագրվել են հիմնականում տեղեկատվական և կազմակերպչական դժվարություններ: Ամենատարածված խնդիրը եղել է **համապատասխան և վստահելի գիտական աղբյուրների, ինչպես նաև տվյալների հասանելիության սահմանափակությունը**: Բացի այդ, առանձին ուսանողներ նշել են **ժամանակի սղությունը, ծանրաբեռնվածությունը և հետազոտության կազմակերպման (հարցումների իրականացում, մասնակիցների ներգրավում)** դժվարությունները: Ընդհանուր առմամբ, խնդիրները հիմնականում կապված են տեղեկատվական ռեսուրսների հասանելիության և հետազոտական աշխատանքի կազմակերպման հմտությունների հետ:

Բնական գիտությունների ֆակուլտետում հիմնական խնդիրները կապված են տեղեկատվության և գրականության պակասի հետ, թեև առկա են նաև ուսանողներ, որոնք դժվարությունների չեն հանդիպել: **Կիրառական արվեստի** ֆակուլտետում գերակշռում է խնդիրների բացակայությունը, սակայն առանձին դեպքերում նկատվում են վստահելի աղբյուրների որոնման դժվարություններ: **Տնտեսագիտության** ֆակուլտետում խնդիրներն առավել բազմազան են՝ ներառելով տվյալների հասանելիության սահմանափակում, ժամանակի սղություն, ծանրաբեռնվածություն և հետազոտական աշխատանքի ձևակերպման դժվարություններ, թեև այստեղ ևս կան ուսանողներ, որոնք խնդիրներ չեն նշել: **Հումանիտար**

գիտությունների ֆակուլտետում հիմնականում խնդիրներ չեն արձանագրվել, սակայն առանձին դեպքերում նշվում են աղբյուրների սակավությունը և հետազոտության իրականացման ընթացքում մասնակիցների ներգրավման դժվարությունները։

- ***2025-26 ուստարում 3-րդ կուրսերի ուսանողներին հանդիպած խնդիրները՝ ըստ ֆակուլտետների.***

Բնական գիտությունների ֆակուլտետ

- տեղեկատվության պակաս
- համապատասխան գրականության դժվար հասանելիություն

Կիրառական արվեստի ֆակուլտետ

- վստահելի և գիտական աղբյուրների որոնման դժվարություն
- նյութերի տարբեր և ոչ միանշանակ ներկայացում

Տնտեսագիտության ֆակուլտետ

- տվյալների և պաշտոնական աղբյուրների անհասանելիություն
- գիտական նյութերի պակաս
- ժամանակի սղություն
- միաժամանակյա ծանրաբեռնվածություն

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ

- աղբյուրների սակավություն (հատկապես հայերեն)
- հարցումների/հետազոտության մասնակիցների ներգրավման դժվարություն

- ***2024-25 ուստարվա 3-րդ կուրսերի ուսանողներին հանդիպած խնդիրներ.***
  (բոլոր ֆակուլտետներում էլ առկա են ներքոնշյալ խնդիրները)՝

- հայերեն մասնագիտական գրականության և տեղեկատվության սակավություն
- վստահելի և հստակ աղբյուրների դժվար հասանելիություն
- վերլուծության, եզրակացությունների և մեթոդական ձևակերպումների բարդություն
- ժամանակի կառավարման դժվարություն

Համեմատական վերլուծություն.

Համեմատելով 2024–2025 և 2025–2026 ուստարիների 3-րդ կուրսերի ուսանողների կողմից նշված խնդիրները՝ պարզ է դառնում, որ շարունակաբար կրկնվում են տեղեկատվության և մասնագիտական գրականության պակասը, վստահելի աղբյուրների դժվար հասանելիությունը, ինչպես նաև ժամանակի կառավարման դժվարությունները։

2. Հարց. Ի՞նչ խնդիրների եք հանդիպել հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում (4-րդ կուրսեր, 2025-26 ուստարի)

Վերլուծություն.

Ամփոփելով արդյունքները կարելի է դիտարկել, որ ուսանողների մեծամասնությունը որևէ խնդիր չի նշել, որը վկայում է հետազոտական աշխատանքի գործընթացի արդյունավետ կազմակերպման մասին. ուսումնառության ընթացքում ուսանողները ստացել են բավարար աջակցություն իրենց ղեկավարներից, կրթական գործընթացը կազմակերպվել է հստակ և

կանոնակարգված: Ֆակուլտետների ուսանողները հիմնականում բախվել են տեղեկատվական և գործնական բնույթի խնդիրների: **Տնտեսագիտության** ֆակուլտետում գերակշռել են տվյալների և աղբյուրների հասանելիության հետ կապված դժվարությունները, այդ թվում՝ մայրենի լեզվով գրականության սակավությունը: **Հումանիտար** ֆակուլտետի ուսանողները առավել հաճախ նշել են վերլուծական աշխատանքների (մասնավորապես՝ կորելացիոն վերլուծության), ինչպես նաև տեղեկատվության սահմանափակության, ժամանակի սղության և տեխնիկական խնդիրների առկայությունը: **Բնագիտական և կիրառական արվեստի** ֆակուլտետների ուսանողների հիմնական խնդիրը եղել է տվյալների կամ անհրաժեշտ նյութերի բացակայությունը:

Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ հետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում առավել հաճախ հանդիպող խոչընդոտները կապված են տվյալների և նյութերի հասանելիության, ինչպես նաև մեթոդական և տեխնիկական հմտությունների զարգացման անհրաժեշտության հետ:

- ***2025-26 ուստարվա 4-րդ կուրսերի ուսանողներին հանդիպած խնդիրները՝ ըստ ֆակուլտետների.***

1. Տնտեսագիտության ֆակուլտետ

- տվյալների հասանելիություն
- աղբյուրների բացակայություն
- մայրենի լեզվով գրականության և նյութերի սակավություն

2. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ.

- կորելացիոն վերլուծության կատարում
- տեղեկատվության պակաս կամ սահմանափակ աղբյուրներ
- նյութի սակավություն
- ընտրանք հավաքելը
- ժամանակի սղություն
- հիմնականում՝ տեխնիկական խնդիրներ

3.Բնական գիտությունների ֆակուլտետ.

- երբեմն տվյալների բացակայություն

4.Կիրառական արվեստի ֆակուլտետ.

- նյութերի բացակայություն

- ***2024-25 ուստարվա 4-րդ կուրսերի ուսանողներին հանդիպած խնդիրներ.***

Հիմնականում խնդիրներ արձանագրվել են **հումանիտար** ֆակուլտետի ուսանողների կողմից՝ կապված մասնագիտական գրականության պակասի և հասանելիության, օտարալեզու գրականությունից օգտվելու դժվարության, հետազոտական աշխատանք իրականացնելու համար ֆինանսական միջոցներ չհատկացնելու և դասախոսների՝ ուսանողների աշխատանքներին առավել հետևողական չլինելու հետ:

Համեմատական վերլուծություն.

Համեմատելով 2024–25 և 2025–26 ուստարիների 4-րդ կուրսերի տվյալները, հիմնական կրկնվող խնդիրները հանդիսանում են՝ տեղեկատվության և գրականության սահմանափակ

հասանելիությունը (հատկապես մայրենի լեզվով), տվյալների և աղբյուրների պակասը, ինչպես նաև հետազոտական գործընթացի կազմակերպման ու ժամանակի կառավարման դժվարությունները:

Բարելավման առաջարկներ (3-րդ և 4-րդ կուրսեր)

Հետազոտական աշխատանքների ընթացքում հանդիպած խնդիրները կարող են լուծվել մի շարք տարբերակներով, որոնք կօգնեն բարելավել աշխատանքային ընթացքը և արդյունքները: Ներկայացնում ենք մի քանի առաջարկ՝ հաշվի առնելով առաջացած խնդիրները:

1.Տեղեկատվական և ռեսուրսային ապահովում.

- Ապահովել հասանելիություն գիտական շտեմարաններին և արդիական աղբյուրներին
- Համալրել գրադարանային ֆոնդը (հատկապես հայերեն գրականությամբ)
- Աջակցել տվյալների և պաշտոնական տեղեկատվության ձեռքբերմանը

2.Մեթոդական աջակցություն.

- Տրամադրել հստակ ուղեցույցներ հետազոտական աշխատանքի կատարման համար
- Զարգացնել տեղեկատվության որոնման և աղբյուրների գնահատման հմտությունները
- Կազմակերպել խորհրդատվություններ և գործնական դասընթացներ

3.Կազմակերպչական բարելավում.

- Օպտիմալացնել ուսումնական ծանրաբեռնվածությունը
- Համակարգել հանձնարարությունների ժամկետները
- Ապահովել աշխատանքի փուլային կազմակերպում

4. Հետազոտության իրականացման աջակցություն.

- Աջակցել հարցումների կամ հետազոտության մասնակիցների ներգրավմանը

3.Հարց. Ի՞նչ առաջարկներ ունեք հետազոտական աշխատանքի կազմակերպման և գնահատման բարելավման համար (3-րդ կուրսեր, 2025-26 ուստարի):

Ըստ հարցման արդյունքների ուսանողների զգալի մասը չի ներկայացրել առաջարկներ հետազոտական աշխատանքի կազմակերպման և գնահատման բարելավման վերաբերյալ: Առկա առաջարկները հիմնականում վերաբերում են մեթոդական հստակության ապահովմանը, հետազոտական մեթոդների ուսուցմանը, թեմաների արդիական ընտրությանը և կազմակերպչական գործընթացների բարելավմանը:

Բնական գիտությունների ֆակուլտետում առաջարկները սահմանափակ են և վերաբերում են հիմնականում թեմաների արդիականությանը: **Կիրառական արվեստի** ֆակուլտետում ընդգծվում է մեթոդական ցուցումների և հստակ պահանջների անհրաժեշտությունը: **Տնտեսագիտության** ֆակուլտետում առաջարկներն առավել բազմազան են՝ ներառելով ինչպես մեթոդական, այնպես էլ կազմակերպչական և գնահատման գործընթացների բարելավման ուղղություններ: **Հումանիտար գիտությունների** ֆակուլտետում առաջարկներ չեն ներկայացվել:

➢ ***2025-26 ուստարվա 3-րդ կուրսերի ուսանողների կողմից ներկայացված առաջարկներ՝ ըստ ֆակուլտետների***

1.Բնական գիտությունների ֆակուլտետ

- ընտրել արդիական և մասնագիտական ոլորտին առնչվող թեմաներ

2.Կիրառական արվեստի ֆակուլտետ

- նախապես տրամադրել մեթոդական ցուցումներ աշխատանքի կառուցվածքի վերաբերյալ

3.Տնտեսագիտության ֆակուլտետ

- ապահովել որակյալ տեխնիկական միջոցներով
- ուշադրություն դարձնել թեմայի (վերնագրի) ընտրությանը
- ուսանողներին ծանոթացնել հետազոտական մեթոդներին և գրելու կարգին
- խրախուսել անհատական աշխատանքը
- բազմազանեցնել գնահատման չափանիշները

4.Հումանիտար գիտությունների ֆակուլտետ

- առաջարկներ չեն ներկայացվել

➢ ***2024-25 ուստարվա 3-րդ կուրսերի ուսանողների կողմից ներկայացված առաջարկներ՝ ըստ ֆակուլտետների***

- Թեմաները կապել մասնագիտական ոլորտների հետ՝ ուսումնասիրության ընթացքում գործնական տեղեկատվություն ստանալու և դիպլոմային աշխատանքի նախապատրաստում ապահովելու նպատակով (ԿԱՖ – 1ուս.)
- Հետազոտական աշխատանքների քանակի և ժամկետի վերահսկում՝ միաժամանակյա ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար (ՏԳՖ – 3 ուս.)
- Սեմինարներ՝ վիճակագրական և վերլուծական ծրագրերի օգտագործման վերաբերյալ (ՏԳՖ - 1 ուս.)
- Գրականության մատչելիության ապահովում (ՏԳՖ - 2 ուս.)
- Մասնագիտական խորհրդատվության տրամադրում ամբողջ գործընթացի ընթացքում (ՏԳՖ - 1 ուս.)
- Շրջանառվող ռեսուրսների առկայությամբ տարածաշրջանների առաջարկ՝ կիրառական ուսումնասիրությունների համար (ՏԳՖ - 1 ուս.)
- Հետազոտական աշխատանքը հանձնարարել ուսումնաճանաչողական պրակտիկայի ընթացքում (ՀԳՖ - 1 ուս.)
- Օրինակելի աշխատանքների տրամադրում (ՀԳՖ - 1 ուս.)
- Արդիական, ուսանողի ապագա մասնագիտական գործունեությանը համապատասխան թեմաների ընտրություն (ՀԳՖ - 1 ուս.)
- Դասախոսների ավելի ակտիվ ներգրավվածություն (ՀԳՖ - 1 ուս.)
- Տրամադրել հստակ մեթոդական ուղղորդումներ՝ ուսումնասիրության սկզբում (ՀԳՖ - 1 ուս.)
- Ներկայացման ժամկետների երկարացում՝ տեխնիկական ու կազմակերպչական բարդությունները նվազեցնելու համար (ՀԳՖ - 1 ուս.)
- ՈՒսումնական տարվա սկզբում կազմակերպել հատուկ պարտադիր դասընթացներ հետազոտության հիմունքների վերաբերյալ (ՀԳՖ - 1 ուս.)

Համեմատական վերլուծություն.

Երկու ուստարիների համեմատությունը ցույց է տալիս, որ 3-րդ կուրսերի ուսանողների կողմից կրկնվող հիմնական առաջարկները վերաբերում են արդիական և մասնագիտական ոլորտին համապատասխան թեմաների ընտրությանը, ինչպես նաև մեթոդական ուղեցույցների և հետազոտական մեթոդների վերաբերյալ ավելի հստակ ուսուցման և աջակցման ապահովմանը:

3.Հարց. Ի՞նչ առաջարկներ ունեք հետազոտական աշխատանքի կազմակերպման և գնահատման բարելավման համար (4-րդ կուրսեր, 2025-26 ուստարի):

Վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջարկների մեծ մասը ներկայացվել է **հումանիտար գիտությունների ֆակուլտետի** ուսանողների կողմից և վերաբերում է դասախոս-ուսանող փոխգործակցության, ուսումնական նյութերի հասանելիության և հետազոտական թեմաների արդիականացման հարցերին: **Տնտեսագիտության ֆակուլտետում** հիմնականում առաջարկներ չեն ներկայացվել՝ միակ առաջարկը վերաբերում է խմբային աշխատանքների գնահատման մեխանիզմի վերանայմանը: **Բնական գիտությունների ֆակուլտետում** բարձրացվել է տեխնիկական ապահովվածության խնդիրը, իսկ **կիրառական արվեստի ֆակուլտետում** առաջարկներ չեն արձանագրվել:

- ***2025-26 ուստարվա 4-րդ կուրսերի ուսանողների կողմից ներկայացված առաջարկներ.***

1. Բնական գիտությունների ֆակուլտետ.

- երբեմն սենսորների բացակայություն

2. Տնտեսագիտության ֆակուլտետ.

- խմբայինների դեպքում վերանայել գնահատումը

3. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ.

- նյութ տրամադրվի դասախոսի կողմից, եթե ուսանողի մոտ չի ստացվում գտնել
- ավելացնել անհրաժեշտ գրականության ցանկը
- դասախոս-ուսանող կապի բարելավում, ավելի շատ քննարկումներ
- դասախոսի աջակցություն
- արդիական թեմաների առաջադրում

4. Կիրառական արվեստի ֆակուլտետ.

- առաջարկներ չեն ներկայացվել

- ***2024-25 ուստարվա 4-րդ կուրսերի ուսանողների կողմից ներկայացված առաջարկներ.***

Առաջարկներ եղել են միայն հումանիտար ֆակուլտետի կողմից.

- ուսանողները ցանկանում են, որ դասախոսները **տրամադրեն հավաստի, վստահելի նյութեր**, որոնց հիման վրա կարելի է կատարել գիտական հետազոտություն
- կան առաջարկներ՝ խթանել **խմբային հետազոտություններ**, հատկապես համայնքներում
- որոշ ուսանողներ կարծում են, որ անհրաժեշտ է **ֆինանսական աջակցություն**՝ տարբեր հետազոտական նախագծերին մասնակցելու կամ կազմակերպելու համար

Համեմատական վերլուծություն.

Երկու ուստարիների համեմատությունը ցույց է տալիս, որ ուսանողների կողմից կրկնվող հիմնական առաջարկները վերաբերում են դասախոսի կողմից անհրաժեշտ և վստահելի նյութերի

տրամադրմանը, գրականության հասանելիության ապահովմանը և դասախոս-ուսանող համագործակցության ու մեթոդական աջակցության ուժեղացմանը:

Վերլուծելով բոլոր տրված պատասխանները, կարելի է առանձնացնել մի քանի առաջարկություններ, որոնք կօգնեն բարելավել հետազոտական աշխատանքի կազմակերպումը և գնահատումը:

Առաջարկներ հետազոտական աշխատանքի կազմակերպման և բարելավման համար.

Բարելավման առաջարկներ .(3-րդ և 4-րդ կուրսեր)

1.Մեթոդական և ռեսուրսային ապահովում.

- տրամադրել հստակ մեթոդական ուղեցույցներ
- ուսանողներին ծանոթացնել հետազոտական մեթոդներին և աշխատանքը գրելու կարգին
- ընդլայնել գրականության ցանկը և ապահովել լրացուցիչ նյութերի տրամադրում դասախոսների կողմից
- բարելավել հասանելիությունը գիտական և տեղեկատվական ռեսուրսներին
- ապահովել անհրաժեշտ տեխնիկական միջոցներով

2.Դասախոս-ուսանող համագործակցություն.

- կազմակերպել պարբերական քննարկումներ թեմաների շուրջ
- ապահովել մշտական խորհրդատվություն և աջակցություն
- կազմակերպել գործնական սեմինարներ

3.Թեմաների և ուսումնական գործընթացի կազմակերպում.

- առաջարկել արդիական և կիրառական թեմաներ
- աջակցել թեմաների ճիշտ և հիմնավորված ընտրությանը
- ընտրել հետազոտությանը նպաստող առարկաներ
- օպտիմալացնել ուսումնական ծանրաբեռնվածությունը և համակարգել ժամկետները

4.Գնահատման համակարգի կատարելագործում.

- վերանայել խմբային աշխատանքների գնահատման մեխանիզմները
- խրախուսել անհատական աշխատանքների իրականացումը

- **Համեմատական վերլուծություն 2025–2026 ուստարվա 4-րդ կուրսերի և 2024–2025 ուստարվա 3-րդ կուրսերի կողմից ներկայացված խնդիրների և առաջարկների.**

Տվյալ համեմատության նպատակն է պարզել, թե նույն ուսանողների մոտ հետազոտական աշխատանքների ընթացքում առաջացած որ խնդիրներն են պահպանվել ժամանակի ընթացքում և չեն ստացել բավարար լուծում, ինչպես նաև գնահատել ուսանողների հետազոտական հմտությունների զարգացման դինամիկան և կիրառվող մեթոդների արդյունավետությունը՝ բացահայտելով ինչպես առաջընթացը, այնպես էլ բարելավման կարիք ունեցող ոլորտները և դրանց ուղղված առաջարկները:

2025-26 ուստարվա 4-րդ կուրսերի ուսանողներին հանդիպած խնդիրները՝ ըստ ֆակուլտետների.

1. Տնտեսագիտության ֆակուլտետ

- տվյալների հասանելիություն

- աղբյուրների բացակայություն
- մայրենի լեզվով գրականության և նյութերի սակավություն

2. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ.

- կորելացիոն վերլուծության կատարում
- տեղեկատվության պակաս կամ սահմանափակ աղբյուրներ
- նյութի սակավություն
- ընտրանք հավաքելը
- ժամանակի սղություն
- հիմնականում՝ տեխնիկական խնդիրներ

3.Բնական գիտությունների ֆակուլտետ.

- երբեմն տվյալների բացակայություն

4.Կիրառական արվեստի ֆակուլտետ.

- նյութերի բացակայություն

➢ ***2024-25 ուստարվա 3-րդ կուրսերի ուսանողներին հանդիպած խնդիրներ.***
(բոլոր ֆակուլտետներում էլ առկա են ներքոնշյալ խնդիրները)՝

- հայերեն մասնագիտական գրականության և տեղեկատվության սակավություն
- վստահելի և հստակ աղբյուրների դժվար հասանելիություն
- վերլուծության, եզրակացությունների և մեթոդական ձևակերպումների բարդություն
- ժամանակի կառավարման դժվարություն

Համեմատելով նույն ուսանողների կողմից 2024–2025 ուստարում (3-րդ կուրս) և 2025–2026 ուստարում (4-րդ կուրս) ներկայացված խնդիրները՝ պարզ է դառնում, որ մի շարք խնդիրներ պահպանվել են և չեն ստացել լուծում:

Ըստ վերոնշյալ տվյալների երկու ուստարում էլ շարունակվում են պահպանվել **տվյալների և վստահելի աղբյուրների սահմանափակ հասանելիության խնդիրները, ինչպես նաև հայերեն մասնագիտական գրականության սակավությունը**: Բացի այդ, պահպանվել են հետազոտական աշխատանքների իրականացման հետ կապված դժվարությունները, որոնք **դրսևորվում են վերլուծությունների կատարման և մեթոդական ձևակերպումների բարդությամբ,** ինչպես նաև **ժամանակի կառավարման և աշխատանքի կազմակերպման հետ կապված խնդիրները**:

Այս հանգամանքը վկայում է, որ նշված խնդիրները կրում են շարունակական բնույթ և մեկ ուստարվա ընթացքում լիարժեք չեն լուծվել՝ պահպանվելով նաև հաջորդ ուստարում:

➢ ***2025-26 ուստարվա 4-րդ կուրսերի ուսանողների կողմից ներկայացված առաջարկներ.***

1. Բնական գիտությունների ֆակուլտետ.

- երբեմն սենսորների բացակայություն

2. Տնտեսագիտության ֆակուլտետ.

- խմբայինների դեպքում վերանայել գնահատումը

3. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ.

- նյութ տրամադրվի դասախոսի կողմից, եթե ուսանողի մոտ չի ստացվում գտնել
- ավելացնել անհրաժեշտ գրականության ցանկը

- դասախոս-ուսանող կապի բարելավում, ավելի շատ քննարկումներ
- դասախոսի աջակցություն
- արդիական թեմաների առաջադրում

4. Կիրառական արվեստի ֆակուլտետ.

- առաջարկներ չեն ներկայացվել

➢ ***2024-25 ուստարվա 3-րդ կուրսերի ուսանողների կողմից ներկայացված առաջարկներ՝ ըստ ֆակուլտետների***

- Թեմաները կապել մասնագիտական ոլորտների հետ՝ ուսումնասիրության ընթացքում գործնական տեղեկատվություն ստանալու և դիպլոմային աշխատանքի նախապատրաստում ապահովելու նպատակով (ԿԱՖ – 1ուս.)
- Հետազոտական աշխատանքների քանակի և ժամկետի վերահսկում՝ միաժամանակյա ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար (ՏԳՖ – 3 ուս.)
- Սեմինարներ՝ վիճակագրական և վերլուծական ծրագրերի օգտագործման վերաբերյալ (ՏԳՖ - 1 ուս.)
- Գրականության մատչելիության ապահովում (ՏԳՖ - 2 ուս.)
- Մասնագիտական խորհրդատվության տրամադրում ամբողջ գործընթացի ընթացքում (ՏԳՖ - 1 ուս.)
- Շրջանառվող ռեսուրսների առկայությամբ տարածաշրջանների առաջարկ՝ կիրառական ուսումնասիրությունների համար (ՏԳՖ - 1 ուս.)
- Հետազոտական աշխատանքը հանձնարարել ուսումնաճանաչողական պրակտիկայի ընթացքում (ՀԳՖ - 1 ուս.)
- Օրինակելի աշխատանքների տրամադրում (ՀԳՖ - 1 ուս.)
- Արդիական, ուսանողի ապագա մասնագիտական գործունեությանը համապատասխան թեմաների ընտրություն (ՀԳՖ - 1 ուս.)
- Դասախոսների ավելի ակտիվ ներգրավվածություն (ՀԳՖ - 1 ուս.)
- Տրամադրել հստակ մեթոդական ուղղորդումներ՝ ուսումնասիրության սկզբում (ՀԳՖ - 1 ուս.)
- Ներկայացման ժամկետների երկարացում՝ տեխնիկական ու կազմակերպչական բարդությունները նվազեցնելու համար (ՀԳՖ - 1 ուս.)
- ՈՒսումնական տարվա սկզբում կազմակերպել հատուկ պարտադիր դասընթացներ հետազոտության հիմունքների վերաբերյալ (ՀԳՖ - 1 ուս.)

Երկու ուստարիների առաջարկների համեմատությունը ցույց է տալիս, որ կրկնվող հիմնական առաջարկները վերաբերում են արդիական և մասնագիտական ոլորտին համապատասխան թեմաների առաջադրմանը, դասախոսի կողմից մեթոդական աջակցության և խորհրդատվության ուժեղացմանը, ինչպես նաև անհրաժեշտ գրականության և ուսումնամեթոդական նյութերի ապահովմանը:

Եզրակացություն.

2024–2025 ուստարվա 3-րդ կուրսերի և 2025–2026 ուստարվա նույն ուսանողների՝ 4-րդ կուրսում ներկայացված խնդիրների և առաջարկների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ մի շարք դժվարություններ պահպանվել են և շարունակվել նաև հաջորդ ուստարում: Մասնավորապես, կրկնվող են տվյալների և վստահելի աղբյուրների սահմանափակ հասանելիության, հայերեն մասնագիտական գրականության սակավության, ինչպես նաև հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում վերլուծությունների և մեթոդական ձևակերպումների հետ կապված դժվարությունները: Սա վկայում է, որ նշված խնդիրները կրում են շարունակական բնույթ և պահանջում են համակարգված լուծումներ:
Միևնույն ժամանակ, ուսանողների կողմից ներկայացված առաջարկների համեմատությունը ցույց է տալիս, որ երկու ուստարիներում էլ կարևորվում են արդիական և մասնագիտական ոլորտին համապատասխան թեմաների առաջադրումը, դասախոսի կողմից մեթոդական աջակցության և խորհրդատվության ուժեղացումը, ինչպես նաև անհրաժեշտ գրականության և ուսումնամեթոդական նյութերի ապահովումը:

Ընդհանուր առմամբ, արդյունքները ցույց են տալիս, որ խնդիրների մի մասը շարունակում է պահպանվել, իսկ առաջարկները հիմնականում ուղղված են դրանց հաղթահարմանը, ուստի նպատակահարմար է ուժեղացնել մեթոդական աջակցությունը, ապահովել տեղեկատվական և գիտական աղբյուրների հասանելիությունը և կազմակերպել ուսանողների հետազոտական հմտությունների զարգացմանն ուղղված շարունակական աշխատանքներ, որպեսզի վերոնշյալ խնդիրները հետագա ուստարիներում նվազեն կամ ամբողջությամբ լուծվեն:

ԵՊՀ ԻՄ ԿԲՈԱ բաժին